

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ՀԱՇՈՒԷՑԱՐԴԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ ԶԷ.

Հասարակական մտքի անկայուն վիճակ ու կամքի թուլութիւն, ապագայի նկատմամբ երերուն դիրք ահա մեր հայ կեանքի բնորոշ, վտանգաւոր կողմերը:

Հարուած աշխատանքը, ոյժերի անվերջ գործադրութիւնը անշուշտ յոգնածութիւն ու հասարակական մտքի նեարդայնութիւն առաջ կբերէ, որի հետեանքը կլինի մեր կեանքի առանցք կազմող խնդիրների քաօսային վիճակ ստանալը:

Հասարակական մտքի քաօսից օգտուողները ամենից առաջ թոյլ են ու ուժեղ կամքի, տոկուն աշխատանքի անընդունակները կլինեն: Այսպիսիներն են ամենից առաջ հրապարակ իջնում ու իրենց թուլամորթութիւնը ծածկելու յարմար միջավայրը ստեղծուած տեսնելով սկսում են լուն ուղտ շինել, մի բաժակ ջրի մէջ փոթորիկ հանել. եղածը գունաւորել ու մեծացնել, շրջապատողներին ևս իրենց կողմը քաշելու, իրենց վախկոտութիւնը քօղարկելու, իրենց կամազրկութիւնը երևան չհանելու:

Հոգեբանական խրկոյթ է, որ իրենց հրապարակի տէրեր համարողների այդ կանչն ու ազմուկը այսպէս կոչուած անտարբեր տարբերի վրայ կազդէ ու կայծը կրօցավառուի, ազմուկը կմեծանայ: Երկիւղը վարակիչ է, մանաւանդ երբ երկիւղի թեթև առիթը կայ:

Սակայն եթէ երկշոտ հոգիների համար այդ գործեւակերպը արդարացուցիչ է և նրանք իրենց գոյութեամբ

արդարացնում են այն առածը, թէ «Երբ մութն ընկնում է, շղջիկները փահլէւաններ են դառնում», ապա արդարանալու ինչ տուեալներ ունեն այն, տարիների փորձառութեան պատուաւոր տխրոսով պսակուածները, որոնք այս անգամ մթութեան ժամին հերոս վախկոտներին շեն ձայնակցում, որոնք նոյնպէս ելել են հրապարակ լքումի անախորժ փողը փչելով, տանուլ տուած հարցերի մասին խօսելու ու ձեռնթափ լինելու ծրագիրն առաջարկելու:

Արդեօք այս անգամ էլ այն դժբախտ սխալը չենք կրկնում, որ անձնական հաշիւների յարդարումը հրապարակ հանելով մոռանում ենք էականը:

Արդեօք, նորից չենք սկսում փոքրանալ, նեղսրտանալ և յարմար ըռպէ ենք որոնում սրան ու նրան լայթելու, սիրար հովացնելու, երբ ընդհանուր գործը տուժում է, երբ անհրաժեշտ պահանջները անկատար են մնում:

Տարին բոլորում է ու մեր մամուլի արծարծած բոլոր կարևոր հարցերը մնում են թղթին պահ տուած աւանդներ կարծես երբէք յարութիւն չառնելու պայմանով, և մենք շարունակում ենք եռանդով մեր «անողոք քննադատութիւնը»:

Որքան օգտակար է տեղին ու արդարացի քննադատութիւնը հասարակական կեանքի համար, նոյնքան կազմալուծող, վտանգաւոր է անժամանակ քննադատութիւնը, անգամ եթէ այդ արդարացի է:

Միթէ օրինակ արդարացի կլինի այն քննադատը, որ թշնամու գաւով ձեռք բերած յարձակման վտանգաւոր ըռպէին փոխանակ ոյժը լարելու վերահաս փորձութեանը դիմագրառուելու համար, սկսէ փնտրել գաւազրին ու նրան պատժի ենթարկէ: Չէ՞ որ այդ յօգուտ թշնամու կատարուած քայլ կլինի և տուժողը յամենայն դէպս աւելի շուտ գործն է լինելու քան գաւազիրը:

Հրդեհի ժամին բոլորի պարտքն ամենից առաջ տուն տեղ լափող կրակը հանգցնելն է և ոչ հրդեհի պատճառը որոնելը կամ պատճառ եզողին տուգանել-պատժելը:

Կան ուրեմն դէպքեր, երբ յանցաւորին պատժելուց

առաջ նրա արածի դժբախտ հետևանքները կրճատելու, յանցանքի վնասները քչացնելու, մեղմելու պարտականութիւնն է կարևոր:

Կգայ ժամը և յանցաւորին փնտրելու, կիսադադուի փոթորիկը, կանցնի վտանգը, կիսադադուին կրքերը և այն ժամանակը պարտականութեան երկրորդ մասը լրացնելու գործը կսկսուի:

Մեր կեանքում գերադասուել է դժբախտաբար անժամանակ հաշուէյարդարութիւնը և երկուստէք վնասուել է գործը. նախ որ անձնական հաշիւներով տարուելով վտանգի առաջն առնել մոռացել ենք, երկրորդ՝ մեր քննադատութիւնը եղել է միակողմանի, անզուսպ, որովհետև վտանգի ժամին մարդկանց կրքերն են լարուում ու ապագայ փորձութեան հեռանկարը ամեն ինչ մեծացնում, գունաւորում է մեր աչքում, չնչին բանը ուռցնում ենք «զուր տեղը դատ ու դմփոցների»ի առիթ դառնում: Նման քննադատութեան մէջ բնականաբար սխալներ ենք անում, անտեղութիւններ թոյլ տալիս. և յանցաւորը փոխանակ արժանի պատիժն ստանալու ինքն էլ առիթ է ունենում մեր կրքատութիւնից օգտուելու, մեր մեղադրանքների չափազանցութիւնը առիթ բռնելու և իրեն եթէ ոչ ազատելու, գոնէ իր մեղքը մեղմացնելու:

Այսպիսի անժամանակ հաշուէյարդարութեան ղէպքեր մօտիկ անցեալներում էլ ունեցել ենք, մի տասնամեակ առաջ մեր կեանքը դարձեալ, թէև ոչ այսօրուայ թափով ու ծաւալով, բայց փոթորիկուել էր ու մեր անժամանակ քննադատութեան պատճառով և հասարակութիւնը սուժեց աւելի և իսկական մեղաւորները վերջի վերջոյ կամ չպարզուեցին կամ լիովին հրապարակում չմերկացան:

Նոյն վտանգաւոր սխալն է այժմ կատարւում այժմեան անօրինակ փորձութեան ծանր ժամին և դարձեալ վտանգ է սպառնում մեր կեանքին այժմ աւելի մեծ չափով, աւելի վատ հետևանքներով:

Կան ազգային դժբախտութիւններ, կան կատարուած պատասխանատու քայլեր կան և ի հարկէ սխալներ: Եւ

անա մեզանում առիթ կայ չղջիկային փահլեանութիւն տնելու. մտրակներ շարժելու, խարազանները հրապարակ հանելու. բայց ոչ սխալն աշխատել ուղղելու, ցաւը դարմանելու:

Չէ՞ որ այս վերջինը աշխատանք և այն էլ լարուած, ծանր աշխատանք է պահանջում, իսկ մենք որքան դեռ անսովոր ենք սրանհրան գործ կատարելը քննադատելուց գերադասելու: Գրիչ շարժելու կարողութիւնը յաջող զէնք է դարձել կենդանի գործ կատարելուց խուսափելու յանցանքը պաշտպանելու համար:

Բաւական է, որ մամուլում հրապարակ ելաք ու այս այն գործողի արածը քննադատեցիք, ձեզ համարում են գործ կատարող, ազգային գործիչ և դուք էլ ձեզ աւելի իրաւունք էք համարում միայն գրիչ շարժելու ձեր ընդունակութիւնը ձեզ համար ամեն ինչ բուժող սպեղանի համարելու:

Նման աշխատանքը թերի, անշունչ է, երբ դրան համընթաց չէ կենդանի աշխատանքը: Առանց գործի հաւատն է մեռած, ուր մնաց գրածը:

Ի՞նչ իրական օգուտ է ստանում հայ գաղթականը, երբ մեզանում միայն գաղթականութեան պատճառներն են փնտրում, յանցաւորներին են որոնում ու այս կամ այն անհատին, խմբին դատապարտեալի աթոռներ առաջարկում:

Անգամ եթէ բոլոր յանցաւորներին հրապարակ հանեն, նրանց բոլոր յանցանքները ապացուցուեն, դրանից ոչ սոված գաղթականի փորը կկշտանայ, ոչ նրա ստոնամանիք բնակարանը կտաքանայ և ոչ էլ գաղթականը կդադարի գաղթական լինելուց:

Արդեօք աւելի հայրենիքը վերաշինւում է այն բոլոր քննադատութիւններից, մի կողմ թողնենք նրանց իրաւացի կամ անիրաւ լինելու հարցը, որոնց մեր մամուլը այնքան տեղ է տալիս ու որոնցով իր ընթերցողներին կերակրելով միայն կրքեր է շարժում, լարումն առաջ բերում մեր առանց այն էլ պառակտած կեանքում:

Չարախնդութեան ոգի է փշուժ աւելի շուտ այդօրինակ քննադատութիւններէց, քան սրտացաւութեան. իսկ մեր կեանքը առանց այն էլ մռայլ է. ի՞նչ խիղճ է, այդ մռայլութիւնը սաստկացնելու, կատարուած աղէտը աւելի մեծացնելու:

Ձգճում են ի՞նչ ծանր պատասխանատուութիւն են յանձն առնում նման քննադատները. լարուած նեարդերն աւելի լարելով, մարդկանց կենդանի աշխատանքից կտրելով՝ ուշքը այս ու այն յանցաւորի վրայ ուղղելով:

Ձէ, այդ քննադատութիւնը վերածնունդ հայրենիքի անկեղծ ձգտում ունեցողից չի ելնի, այդ քայլը ժողովրդին սրտով ծառայողի քայլ չէ:

Ասացէք, արդեօք աւեր հայրենիքի նշխար մնացորդները ազատուում են ազահութեան տենչով տարուածների ճանկերից, երբ մենք այդ նշխարները ժողովելու պարտքը սրա նրա վրայ ենք ձգում, այս ու այն հիմնարկութեան ենք պատասխանատու համարում, իսկ ինքներս մի կողմ կանգնած մատը մատին չենք խփում ու միայն պահանջներ ենք անում:

Ձէ, մեր նախնեաց սրբազան աւանդների մեծ արժէքը ըմբռնողի գործ չէ մեղադրանք կարդալը սրան նրան: Ով զգում է այդ սրբութիւնների արժէքը անկեղծ, նա իր ձեռքից եկածը կանէ. նա ինքն ամենից առաջ կաշխատէ սոսկալի փոթորկից ազատել այդ նշխարները, յորձանոս հեղեղից փրկել մեր հինաւուրց սրբութիւնները:

Արդեօք հայ որբը խնամւում, ուսման ու դաստիարակութեամբ է արժանանում այն պատճառով, որ այս ու այն կազմակերպութեան պարտականութիւններն ենք թւում ու պահանջներ անում անվերջ, անդադրում, երբ որբերի թիւն օրէցօր է աւելանում, երբ կենսական պայմանները ժամ առ ժամ են թանգանում ու մարդկային ոյժից վեր է լինում խաղաղ ժամանակի պայմաններով դեկավարել գործը:

Մի խօսէք միայն, մտէք գործի մէջ, տեսէք ձեր աչքով, շօշափեցէք ձեր ձեռքով եղածը, ծանօթացէք պայ-

մանների հետ և կտեսնէք, որ յաճախ աւելին է արւում, քան ենթադրում են:

Ժամանակը պատերազմական է ու օր օրի վրայ փոփոխուող, միշտ նոր պահանջներ, նոր դժուարութիւններ առաջ բերող:

Այսօրուայ հնարաւորը վաղը անկարելի է դառնում. մեզ իրաւացի պահանջ թուացողը, վաղը մեր կամքի հակառակ անիրագործելի է լինում:

Ուշադրութեան չառնել այս հանգամանքը, փափկանկատ չլինել ու գրիչն առնել «անողոք պահանջներ» անելու կնշանակէ հասարակական կեանքի կազմալուծման և ոչ վերաշինութեան ծառայել:

Կազմալուծման են ծառայում այժմ նրանք, որոնք անժամանակ հաշուէյարդարի են ելել ու հրապարակը իրենց վայնասունով բռնել, աշխատաւորներին էլ հնարաւորութիւնից զրկել գլուխը կախ օր ու գիշեր աշխատելու:

Այժմ չէ ժամանակը մեր աղէտներից մեղաւորներին ու արդարներին դատելու, սրան ու նրան կատարուած իրողութիւնների համար պատասխանատու ճանաչելու:

Անվերջ, անդադրում ու լարուած աշխատանքի ժամանակն է այժմ և ամեն ոք առանց բացառութեան անելիքներ ունի: Թող ոչ ոք չսսէ թէ այս իմ պարտականութիւնը չէ, այս իր գործը չէ, թող ուրիշն անէ, թող նա պատասխանէ, ով մեղաւոր է կատարուած դժբախտութեան:

Մեր բոլորիս պարտքն է հայրենիքի դժբախտութեան ծափը, տնքացող ժամին անդադրում աշխատել և ամեն տեղ էլ օգնութեան հասնել, երբ ոյժ կայ, ձեռնհասութիւնը ներում է:

Խաղաղ ժամանակում է իրօք աշխատանքի կանոնաւոր բաժանումը հնարաւոր. այժմ, դժբախտութեան ժամին, ձեռքից եկածը, օգտակարը պէտք է անել, տոանց ասելու այդ իմ պարտքն է թէ ոչ:

Թողորս էլ զիտենք, որ աղէտը շատ է մեծ, օգնող ձեռքերը շատ են սակաւ, միթէ ուրեմն խօսք պիտի լինի

պարտականութիւնների սահմանաւորումների մասին, միթէ այժմ պէտք է սառնասրտութեամբ նայել աղէտին ու սաել «ով եփել է ապուրը, թող նա խմէ» Ո՛չ, դեռ աղէտի առաջն առնենք, դեռ թոյլ չտանք, որ եղածն էլ ձեռքից գնայ, դեռ մեր անտարբերութեամբ ու չարախինդ քննադատութեամբ վերջնական քայքայման չնպաստենք. յետոյ կգայ և հաշուէյարգարի ժամը, այն ժամանակ ամեն ոք, թող իւր գիտցածն ասէ, այն ժամանակ իրաւունք կունենայ աշխատողը, գործ կատարողը իւր ձայնը ուժգինս հնչեցնելու:

Անժամանակ հաշուէյարգարի դառն հետևանքները այժմէն իսկ զգալի են և մեր անձնական հաշիւների խրնդրով կուրանալուց է, որ չենք տեսնում այն ահաւոր կազմալուծումը, որի պատճառներից մէկն էլ մենք ենք մեր այդօրինակ գործելակերպով:

Մինչդեռ լուսաւոր ապագայի տենչացող ժողովուրդները, մեծ, թէ փոքր, օր ու գիշեր աշխատանքի ճամբան են բռնել, մենք արդէն կէս ճանապարհին թուլացինք. անժամանակ հաշուէյարգարը թուլացման նշան է:

Մինչդեռ մենք վերաշինւող հայրենիքի մասին ենք ճառում ու խօսում մի կողմից, միւս կողմից միմեանց օձիքից բռնած դէպի մեղադրեալների նստարաններն ենք քաշքաշում ու մեր սպիկարութիւնը ցոյց տալիս:

Չէ՞ն ասի որ իրօք մեզ համար վերաշինւող հայրենիք, լուսաւոր ապագայ, վերածնւող ժողովուրդ խօսքերը զարդի համար են ասուած ու նորաձևութեան հետևելու նշան են, երբ մենք միացող աւերակների մղկտացող ժողովրդի հանդէպ մեղաւորներ փնտրելու, յանցաւորներ զանելու ու պատժելու անժամանակ ու ներկայումս անօգուտ աշխատանքով ենք զբաղւում:

Միթէ հայ ժողովրդի այս շտեմնուած չյուած փորձութեան ժամին էլ դրսում երևալու, մեզ ցոյց տալու օտարին զարմացնելու համար ենք խօսում փառաւոր ապագայի համար և անկեղծօրէն չենք ասլրում այդ դաղափարով, չենք ոգևորւում այդ մեծ, սուրբ աշխատանքով:

Եթէ այս վերջին ու նուազագոյն պահանջ անկեղծութիւնն էլ պակասում է, ապա խոստովանենք, որ բարոյական կազմալուծումն է բուն գրել մէջներս ու ի գուր ենք վերահաս անխուսափելի վտանգի առաջ հոգեւարքի կանչուածներ բարձրացնում: Եթէ օտարին շացնելու համար է, նա մեզնից գործ կպահանջէ ու մեր խօսքին չի հաւատայ, եթէ մեզ համար է. աւելորդ ինքնախաբէութիւն է:

Տարին բոլորում է, իսկ մեր հասարակական ցաւերը բազմապատկոււմ են ու խորանում մինչդեռ ճրքան շատ են թղթի սրտացաւ գործիչները, գրչի գաղափարախօսները, հրապարակի վրայ օձիք պատող հայրենասէրները:

Աղէտը խօսքով չի բուժոււմ, աղէտը այժմ և եթ յանցաւորը գտնելու միջոցով չի դարմանոււմ: Աղէտը գործող է պահանջում, անդադրում, անվերջ աշխատող. մինչև ճգնաժամն անցնի, մինչև փորձութիւնը վերջանայ:

Չկրկնենք մեր անցեալ սխալը, չընդարձակենք մեր աղէտը մեր անժամանակ հաշուէյարդարով, մեր անտեղի քննադատութիւններով:

Աշխատենք անվերջ, անկեղծ ու հաւատացէք որ մեր աղէտը կվերջանայ և յանցանքը կմեղմանայ:

Թողնենք խօսքի, անպէտք խօսքի տարին ու աշխատանքի տարին թևակոխենք:

Գիւտ արեղայ

Մ Ա Մ Ո Ւ Լ .

«Հովիտ» շաբաթաթերթը իր №№ 40 եւ 41-ում իմ «Անձանօթութեան հետեւանքը» յօդուածից ուշադրութեան է արժանացրել «Անձանօթութեան հետեւանք չէ» խմբագրականով ու առաջարկել է «Բարի խրատներ» չը կարդալ որովհետև «մի արեղայ» եւ. հաւանօրէն «Բարի խրատ» վարդապետի աստիճան ունեցողին է վերապահուած...